# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
### Ռ. Միրոյանի անվան Հ._77_
### ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան Աղոնց 11 Հեռ. 010-23-24-91

№ 888 << 22 >> սեպտեմբերի 2023 թ.

*ՀՀ ԿԳՄՍ գլխավոր*

*քարտուղար*

*Հ.Հակոբյանին*

Հարգելի՛ տիկին Հակոբյան

Տեղեկացնում ենք Ձեզ , որ Երևանի Ռ.Միրոյանի անվան հ.77 հիմնական դպրոցում առաջացել է << Անգլերեն >> ուսումնական առարկայի / 24 դասաժամ / ուսուցչի թափուր տեղ :

Կից ներկայացնում ենք հայտարարության տեքստը՝ կայքում տեղադրելու համար:

Հարգանքով՝

Դպրոցի տնօրեն՝ Ն.Պետրոսյան

Մրցույթ՝ «Երևանի Ռ.Միրոյանի անվան հ.77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

<<Անգլերեն >> ուսումնական առարկայի / 24 դասաժամ / թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ-ի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 13:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. հոկտեմբերի 13-ին՝ժամը 13.30–ին «Երևանի Ռ.Միրոյանի անվան հ. 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ք.Երևան ,Աղոնցի փ. 11

Տեղեկությունների համար զանգահարել 010-23-24-91 հեռախոսահամարով :